# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
# ՀՀԱՄՄՀ-ԲՄԾՁԲ-22/27 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Մեծամոր** **04.07.2022թ.**

22.06.2022-04.07.2022թթ. ՀՀ, ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1, գնումների և մատակարարման բաժին հասցեում տեղի ունեցավ գնումների, էլեկտրոնային գնումների և այլ հարակից խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԲՄԾՁԲ-22/27 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Մ. Հովհաննիսյան՝ Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,
Գ. Խուրշուդյան՝ Համայնքի ղեկավարի խորհրդական,
Ֆ. Բավեյան՝ համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Մ. Հովհաննիսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ն. Հակոբյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. ՀՀԱՄՄՀ-ԲՄԾՁԲ-22/27 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի, ներկայացված հայտերի բացման, գնահատման, առաջարկված գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

## 1.ՀՀԱՄՄՀ-ԲՄԾՁԲ-22/27 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ և ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտնեց տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների վերաբերյալ տեղեկատվությունը:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով |
|---|---|---|

| | | սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | գնումների, էլեկտրոնային գնումների և այլ հարակից խորհրդատվական ծառայություններ | 4700000 |

ՀՀԱՄՄՀ-ԲՄԾՁԲ-22/27 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են ՀՀ, ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1, գնումների և մատակարարման բաժին հասցեում հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2022 թվականի հունիսի 22-ին, ժամը «09:30»-ին: Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և հիմնավորումներ չեն ներկայացվել:

ՀՀԱՄՄՀ-ԲՄԾՁԲ-22/27 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե | Էլ. փոստ |
|---|---|---|---|
| 1 | «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78, 8-րդ հարկ | info@epromotion.am |

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

1. Հայտը կազմվել և ներկայացվել է ՀՀԱՄՄՀ-ԲՄԾՁԲ-22/27 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.
2. Ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը,
3. Ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին,

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակցի գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի | | | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | անվանում | Զբաղեցրած տեղ | Ընտրված մասնակցի նշում՝ «X» | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1* | գնումների, էլեկտրոնային գնումների և այլ հարակից խորհրդատվական ծառայություններ | «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ | - | | 4700000 | 0 | 4700000 |

*վարվել են բանակցություններ՝ արդյունքները ներկայացված են ստորև

Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.
2. Ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ԸՆՏՐՎԱԾ և ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն, վարվեցին գների նվազեցման նպատակով միաժամանակյա բանակցություններ:

Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետին «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է նոր նվազեցված գնային առաջարկ՝ 4200000 /չորս միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Հանձնաժողովը որոշեց.

1. Որպես ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Մ. Հովհաննիսյան

*Հանձնաժողովի անդամներ՝*

Գ. Խուրշուդյան

Ֆ. Բավեյան

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ն. Հակոբյան